

Դաշնակցութեան կողմէ գեղեցիկ ֆոնի-
րան մը տրուեցաւ. ի ներկայութեան կա-
ռավարական բոլոր պաշտօնէից, Սահմա-
նադրութեան Ա. տարեդարձին հանդէպին
մասնակցելու համար, հրաւիրուած էին
քերթող ցեղապետներ, բայց անոնցմէ ու-
մանք գլխու ցաւ չունենալու համար
չէին եկած եւ ոմանց գայն ալ չընդունե-
ռեցաւ: Մարդիկնք որ Սահմանադրու-
թիւնը ա'լ աւելի ամրապնդէ երկու ժո-
ղովոցնան սէրը:

ՏՍՐՈՂՆԻ

ՔՈՂԱՔԱՅԱՆ ԲԱԺԻՆ

ՁԻՆ ԵՒ ՃՍՐԱՆ.— Ծառոցները,
ինչպէս ծանուցուեցաւ, կերակրի օրը
սկսան Անթուհ-Մուքանի երկաթուղին
վերադարձութեան: Այդ առթիւ մինչեւ հի-
մա շփոթութիւն մը չ'առաջացաւ: Ծառոցն
ընդհանրապէս լրացուցին անգամ համա-
կարծիք են թողելոյ կառավարութեան:
Անոնք կողմէ կը յայտարարուի որ ծառոցն
ծրագրութեան կողմէ ընդդիմութիւնը ար-
դենք է այն իրողութեան թէ երկաթու-
ղին շինութեան առին ծառոցները
գլխաւորներուն գետնները առած էին,
առանց արժէքը վճարելու եւ շատ անգամ
ալ առանց հատուցում մը ընելու: Ուրեմն
Բէքիւն մէջ կը խորհուրդ ծառոցն կողմէ
պահանջուին ըլլալու առիթն ոգտուի
կարգադրելու գետններու այդ խնդիրը:
Ծառոցն յետագայմ է նոյն խնդիրը եւ իս-
կոյն ձեռնարկած կամուրջներու եւ թիւ-
նէներու շինութեանց, որոնք երկու տա-
րիկ կը կարծուին: Գոյացած համաձայնու-
թիւնը կը տրամադրէ թէ զին կրնայ երկա-
թուղին զինը երկու տարեկէն աւարտելիք
բարենորոգմանց կիրառուէին տասնընիւց
տարի ետքը:

— Զինեւաճառական վէճը աստիճան մը
մտանդութիւն կը պատճառէ Բեքեթ-
պուրի մէջ եւ ուս լրացիւններ յօդ-
ուածներով ցոյց կուտան այդ վէճին Ռու-
սիոյ մասին արդէ բերելիք վստահները:
Բեքեթպուրի պաշտօնական շրջանակնե-
րուն մէջ, սակայն, նուազ յոռեմեանու-
թիւն կը տիրէ եւ ուս զիւսանադիտու-
թիւնը թէ՛ Բեքեթի թէ՛ Բէքիւնի մէջ
շանքեր կ'ընէ, որպէս զի վէճը խաղա-
ղութեան կարգադրուի:

ՊԱՐՏԱՆԱԳՐԱՆ.— Թէրանէն կը հե-
ռադրուի Յաւանուրդի Զայուցի թէ
գաւառային նոր կառավարիչները մօտեց-
րինք պաշտօնատեղիները պիտի ուղեւո-
րին: Երազի կառավարիչն է Այն-Խա-
Տէօվէ, եւ ոչ թէ Այն-Խա-Տէօվէ: Գա-
հուն է միանգամայն խնամակալութեան
թիւնանու Ջըլ-Իւս-Սուլթան աղագայնա-
կաններուն կողմէ կեցուցուեց է Ռէշա-
Պաղուն տանող կէս ճամբան: Մանչիլի
մէջ, վստահ զի կը վախճուի թէ մի՛ գուցէ
անոր Թէրան ժամանումը շփոթութեանց
պատճառ ըլլայ: Տէյիլ Միլի Բեքեթ-
պուրի թղթակցը կը հեռագրէ թէ Ջըլ-
Իւս-Սուլթան իրեն հաստատարութիւն
նամի կը նկատուի սահմանադրականնե-
րուն եւ Թէրանի նոր պաշտօնատարնե-
րուն: Իր թշնամիներուն հետ վարուելու
եղանակը շատ ծանօթ է. ծառի մը կա-
պել կուտայ զանոնք, արեւին տակ, եւ
ընտուռ վրայ մեղր քնել կուտայ, մինչեւ
որ մեղրուեալ լայնութեանքները մահ ա-
ռա՛ղ բերին: Թակիլապէս, այն աղագայնա-
կանը որ երկու տարի առաջ առաջնա-
կարգ դեր մը կատարեց խորհրդարանին եւ
Շահին միջեւ կատարող վէճին մէջ, Թէրան
ժամանեց եւ ժողովուրդեան կողմէ
մեծ խանգալաւորութեամբ ընդունուեցաւ:
Աղագայնականները ձերբակալեցին յետողի-
մայան մըլա մը Միլեմ, երբ ծայտեալ
վիճակի մէջ փախելի կը փորձէր: Կ'ըսուի
թէ համաձայնութիւն մը գոյացած է, ու-
րով նախորդ Շահը կը հաւանի օգոստոս
4/17ին մեկնիլ, պայմանով որ կառավա-
րութիւնը իրեն վճարէ տարեկան 15,000
ռուբլ: Դուրեմի մէջ ծնողի մէջեւեղն ալ
մէկ քանի շփոթութիւններ ծագեցան: Նոս
խորդ Շահին կուտակեցներուն եւ Սէդրա-
րի մարդոց միջեւ: Մասաքի զորավա-
րին ինչպիսիքները միջնորդեցին: Որտեղ
զինուորներու գումարատկ մը, երկու
խորտակեցներով, ճամբուն վրայ Ղըր-
կուեցաւ:

ՍՊԱՆԻԱ ԵՒ ՄԱԼԵՐԱ.— Մէլիլայէն
առնուած հեռագրիւններու նայելով, Մա-
լեքցիները պատմեցին կը չինին նատորի
բարձունքներուն վրայ, իրենք թէ երկու
ունենալով որ սպանիական զինուորները
այդ կողմէն յառաջանան: Պէնի Սիլբարի
ցեղին մէկ քանի հեծելաբորժերը Մէլիլա
ժամանելով ծանուցին Մարիա զորավա-
րին թէ Ռիֆցիները, յուսահատած Կուէ-
լանայի ցեղերուն ընթացքէն, որոնք
Սպանիոյ բարեկամ են, մտադրի են անոնց
վրայ յարձակիլ: Սպանիական զինուոր-
ները պիտի միջամտն, եթէ կուի տեղի
ունենայ:

— Մէլիլայէն չարաթ օրուան թուական

նով կը հեռագրեն թէ մարտիկները եւ
հետախուզող յաճախորդը ամբողջ
են ինչնայի բանակը՝ տեսնուած խու-
բեր ցոյցելու համար: Գիշերը Կուրուկու
լեռան վրայ կրակներ կը վառէին իրեն
նշան:

ՍՈՍՏԱՆԵԱՆ ԽՈՐՀՈՐԴԱՐԱՆ

Ա. ՆՍՏԱՇՐԱՆ

131րդ հիս, 30 յուլիս 1909

Երեւոյ. Ժողովին երէկուան ընդհա-
նուր նիստը սկսաւ ժամ 2/3ին: Անմէա
Ռիզա պէյ կ'առննայեալէն Ատենական
գործողութեանց կատարումէն ետքը կար-
գացուեցաւ եպարքոսական գիրք մը, որ
կը զրկէր պետական խորհուրդին կողմէ
պատրաստուած եւ նախարարաց խորհու-
րին կողմէ ընդունուած օրինագիծ մը՝
երեսփոխան ընտրուած զինուորական սպա-
ներու մասին: Այդ օրինագիծը, որ իս-
կոյն ճշտեցուցուեցաւ, կը որոշուէր թէ
երեսփոխան ընտրուած զինուորական սպա-
ները, խորհրդարանական նստաշրջանին
առին, իրենք արձակուրդ վախճող պիտի
նկատուին՝ այսինքն թէ երեսփոխանական
չորս տարուան շրջանին մէջ անոնց առ-
տինանի բարձրացման եւ հանգստեան կոչ-
ուելու իրաւունքները պիտի պահպանե-
ուին: Այդա բերմը երաւ Զանդուրի երես-
փոխան Թէվֆիք էֆ. եւ պահանջեց ա-
տենապետէն դատական հետապնդում կա-
տարել Ստալիոյ երեսփոխան Եպարքոս
Թէվֆիք պէյին հրատարակած Թաւլիլի
Էմիւր լրագրին դէմ, որ իր խմբագրա-
կանին մէջ երեսփոխանները նախատեմ է,
ըսելով որ ամէն որ պետական պաշտօնա-
րանները կը յաճախեն անձնական չափերու
նկատուումով՝ զանազան անձեր մտքի տա-
րիք ու գայնագամ անուանել տալու հա-
մար եւսայն: Գայնէրի երեսփոխան Էմիւր
էֆ. դիմել տուաւ թէ նոյն լրագիրը
ըստ իր յայտարարումի կ'ընէ այդ տե-
սակ հրատարակութիւնները: Ուրի երես-
փոխան մըն ալ ըսաւ թէ այդ թերթը ա-
ռաջին անգամ չէ որ հեգնութեամբ եւ
նախատինքով կը յարձակի երեսփոխա-
ններուն վրայ: Ատենական յայտարարեց
թէ ցաւալի բան մըն է: Մէկ քանի երես-
փոխաններ ալ առաջարկեցին որ ատեւ
նագետը, տպագրական օրէնքին տա-
մադրութեանց համաձայն, դատ բանայ
Թաւլիլի Էմիւրի դէմ՝ Երեւոյ. Ժողովը
նախատեմ ըլլալուն համար: Ուրիներ
ալ առաջարկեցին իրեն պատուիրակ եր-
կու երեսփոխան զրիկ՝ Երեւոյ. Ժողովին
անունով պահանջելու որ յայտնի յօդ-
ուածագրին անունը, Բաւական բուն
վիճաբանութիւն մը կատարուի ետքը,
ատենապետը յայտարարեց թէ այդ մա-
սին բողոքողները պէտք է գործիւն
մը ներկայացնեն իրեն: Ժողովը յետոյ
ձեռք առաւ Սահմանադրութեան վերա-
քննութիւնը, վստահ զի Մերակոյտը անոր
ամէնէն կարեւոր յօդուածները քննելով,
փոփոխութիւններ ըրած էր եւ միւս
յօդուածներուն ալ յառաջիկայ նըս-
տաշրջանին յետաձգուած էր: Մերա-
կոյտը ընդունած էր Երեւոյ. Ժողովը
վին որոշումը՝ ձեռնարկականներուն տա-
րեթշաճը՝ 15,000 դրուի զեղչելու մա-
սին: Երեսփոխանները ծափերով ընդունե-
ցին այդ պարագան: Յանձնաժողովին տե-
ղեկարբ Համիտ էֆ. ըսաւ թէ յանձնա-
ժողովը, Մերակոյտին յանձնաժողովին
հետ համաձայնեց ետքը, ընդունած է
գրիթը բոլոր փոփոխութիւնները՝ մանա-
ւանդ այն կէտը որ կը վերաբերի օրինա-
գիծները ձեռնարկականներու եւ երեսփո-
խաններու կողմէ պատրաստուելուն եւ օ-
րինագիծները առաջին անգամ Մերակոյ-
տին մէջ վիճաբանութեան ենթարկուելուն:
Համիտ էֆ. յարեց թէ ընդունուած է Մե-
րակոյտին ըրած սա յուշելումը 4րդ յօդ-
ուածին վրայ.— «Վեհ. Սուլթանը երբ
գահ բարձրանայ, իր երդումը պիտի կա-
տարէ Աղագային Ժողովին մէջ, եւ եթէ
այդ մարմնին նստաշրջանը փակուած է,
առաջին գումարարկին մէջ»: 6րդ յօդ-
ուածը նոյնութեամբ ընդունուած է. իսկ
7րդ յօդուածին այն մասին վրայ թէ
«Վեհ. Սուլթանը պիտի կրնայ նախարա-
րութիւնը պաշտօնանկ ընել կամ անուանել
աւելցաւ «Բաւ օրինի» խօսքը: Այդ յա-
ւելումն ալ ընդունուեցաւ: Ժողովը
լուծման վերաբերող յօդուածը սա յաւե-
լումը կրեց.— «Երեւոյ. Ժողովը երեք
ամիսէն ընտրուելու եւ Մերակոյտին հաւա-
նութիւնը ստանալու պայմանով ի հարկի
կրնայ լուծուիլ»: Ժողովը ընդունեց այդ
կէտը, նաեւ ընդունեց 16րդ յօդուածը
վրայ եղած սա յուշելումը.— «Ընդհանուր
կիրպով գաղանի ընկերակցութեանց կող-
մութիւնը արգելուած է»: 30 ու 31րդ
յօդուածները նոյնութեամբ ընդունուե-
ցան. 32րդ յօդուածին մէջ եղած փոփո-
խութիւնն ալ, որով սկստագրուեց կը մա-
տուցանէին տեղ «Եպարքոսը կը տեղե-
կագրէ» նշանակուած է, ընդունուեցաւ:

Նաեւ 38, 39, 40, 41, 46, 47, 56 ու
57րդ յօդուածները: Սահմանադրութիւնը
իր նախնական ձեւին մէջ կը տրամադրէր
թէ Երեւոյ. Ժողովը ատենապետի ու դե-
քանատենապետներու համար երեքական ընտ-
րելի կը ներկայացնէ եւ Սուլթանը ա-
տենապետէն մէկը կ'առնուէ: Երեւոյ. Ժո-
ղովը, Սահմանադրութիւնը վերաքննելուն
առթիւ, որոշած էր որ Երեւոյ. Ժողովը,
ուղղակի ինք ընտրէ իր ատենապետը, եւ
դեր-ատենապետները: Մերակոյտը ըն-
դունելով այդ փոփոխութիւնը, տրամա-
դրութիւն մը աւելցուցաւ է որ ընտրու-
թիւնը վաւերանայ վեհապետին կողմէ:
Ռիզա փաշա ըսաւ թէ վաւերանայեալ պէտք
չկայ, այլ փափկանկատութեան համար կը
տեղեկագրուի Մուսթաֆա Արիֆ պէյ ալ
ըսաւ թէ սահմանադրական տրամադրու-
թեանց համաձայն, Աղագային Ժողովը
պէտք է անկախ ըլլայ. եթէ Աղագային
Ժողովին ատենապետի պաշտօնը գործա-
դիր իշխանութեան կողմէ վաւերանայ,
այդ պարագային Երեւոյ. Ժողովը պետա-
կան խորհուրդին պէս բան մը եղած կ'ը-
լայ: Ուրի երեսփոխաններ ալ խօսեցին
Վարդէս էֆ. ըսաւ թէ միշտ աչքի առ-
ջեւ ունենալու է թէ Ապա-Իւլ-Համիտներ
կրնան գալ եւ ըստ անոն որոշում տալ
պէտք է: Վերջապէս ծախարարութիւննե-
րով ընդունուեցաւ Ռիզա փաշայի առա-
ջարկութիւնը: Ատենապետ պահ մը փակուելէ
ետքը վերստին բացուեցաւ եւ զինուորա-
կան հանգստեան թոյլակի օրինագիծը
նկատողութեան առնուելով կարգ մը փո-
փոխութիւններով ընդունուեցաւ: Երկու
երեսփոխաններ առաջարկեցին վիճաբա-
նութեան ենթարկել ինչ ուժի մէջն առնե-
լու պարագային արտօնապէս եւ դատա-
պարտաւածներու վերաբերեալ օրինագիծը,
բայց շատ մը երեսփոխաններ ընդիմացան:
Ատենապետը կարգաւ տուաւ Անգիոյ
Թագաւորին անձնական քարտուղարին
մէկ հեռագիրը, ուղղուած Ժողովին դե-
քանատենապետ եւ հիմա ներքին գործոց նա-
խարար Թալաթ պէյին եւ պատասխանող
Թալաթ պէյին այն հեռագրին որով չնոր-
հակուեցին կը յայտնէր օսմ. երեսփո-
պատենապետութեան եղած ընդունուե-
թեանց համար: Էմիւր էֆ. իր բարեւ-
ները կը հաղորդէր եւ մաղթանքներ կ'ընէր
երկու երկիրներու բարեկամական յարա-
բերութեանց համար: Այդ հեռագիրը ծա-
փերով ողջունուեցաւ: Ատենապետ փակուե-
ցաւ ժամ 10ին, այսօր, ուրբաթ, նորէն
գումարուելու պայմանով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿՐԵՏԻՆ ԽԵՒԻՐԸ.— Եպարքոսը ու
արտաքին գործոց նախարարը, երէկ,
խորհրդակցեցան Յունաստանի վերջին
ծանուցադրին տրուելիք պատասխանին
համար: Յետոյ ներքին, երեսփոխան եւ
առնարկական ու հանրօգուտ շինութեան
նախարարներն ալ մասնակցեցան այդ
խորհրդակցութեանց: Մահուտ Շէվքեդ
փաշա եւ տեսակցեցաւ Եպարքոսին հետ:
— Մանուկադրին պատասխանը երէկ
իրիկուն ուշ ատեն պատասխանուելով հե-
ռագրով հաղորդուեցաւ Աթինի օսմ.
դեսպան Նալի պէյին: Յունաստանի նա-
խարարապետին հաղորդուելու համար
— Հելլենական դեսպան Պ. Կիրիարիս
երէկ տեսակցեցաւ Եպարքոսին հետ եւ
տեղեկութիւն տուցաւ. թէ Յունաստանի
վերջին ծանուցադիրը ինչ տպաւորու-
թիւն գործած է օսմ. պաշտօնական չըր-
ջանակներուն մէջ:

— Անգլիոյ, Պրանսայի, Իտալիոյ ու
Ռուսիոյ դեսպանները գումարում ունե-
ցան կայսրութեան վրայ խորհրդակցելու:
Կ'ըսուի թէ այդ դեսպանները կատարե-
լապէս լաւատես են:
— Թաւլիլի Էմիւրը կ'ըսէ թէ Բ.
Դուրը Յունաստանի ծանուցադրին սա
կէտերուն վրայ դիմողութիւն ըրած է.—
Օսմ. կառավարութիւնը իր քնն-
նութեանց հետեանքով ճշմարտութեան
համապատասխան եւ համոզիլ չի գտնի
Յունաստանի ծանուցադրին այն մասը
թէ Կրեմլին հելլեն սպանները գործած
ճառա-
յութենէ եղած են եւ այլեւս չեն գտնուի
հելլեն կառավարութեան ծառայութեանը
մէջ: Շատ ուշագրաւ նկատուած է Յու-
նաստանի ծանուցադրին այն մասը թէ
հրաման տրուած է օսմ. երկիրները գործ-
նուող հելլեն հիւպատոսներուն որ իրենց
պարտականութենէն դուրս բան մը չընեն:
Բ. Դուրը այնպէս կը նկատէ թէ հիմա
այդ տեսակ հրաման տրուելու ցոյց կու-
տայ որ ատոնք անէ առաջ խռովարա-
րութեան կը զբաղէին հելլեն կառավա-
րութեան հրամանները եւ արքունութեանը:
Միւսգաւառին սա նշանակութիւնն ալ
ունի որ Յունաստան իր հիւպատոսներուն
խռովարարական գործունէութեան մասին
հրահանգ տուած եւ յետոյ հրապարակ
է ժամանակի մը համար յետաձգելու Բ.
Դուրը կը պահանջէ որ այդ կէտն ու
ատոն հիման մը վրայ հաստատուի: Դի-

մողութեան արժանի նկատուած է նաեւ
Յունաստանի ծանուցադրին այն մասը
թէ Մակեդոնիա գտնուող երկու հարիւր հե-
լէն սպաններ ետ կուտած են եւ հիմա
օսմ. երկիրներու մէջ խռովարարութեամբ
զբաղող հելլեն սպայ չկայ: Վերջապէս
Բ. Դուրը բացարձակապէս ապօրոյժիլ եւ
համոզիլ պատասխան մը կը պահանջէ
հելլեն կառավարութենէն:

— Պրուսայի մէջ 30,000 հոգիի միջին
մը գումարուելու է՝ պահանջելով պահպա-
նել Կրեմլին վրայ օսմ. վեհապետական
իրաւունքները, երկրէն վտարել խռովա-
բար հելլենները եւ այլն:
— Մեծ տերութիւնները կը բանակցին
կրեմապէս խնդիրը վերջնականապէս կար-
գադրելու համար: Բանակցութիւնները
տասը օրէն պիտի աւարտին եւ տէրու-
թիւնները պիտի հաղորդեն իրենց վերջ-
նական որոշումները:

— Սալթիկ կը հերքէ Բրոսոսի այն
լուրը թէ Յունաստանի ծանուցադրին
վրայ չորեքշաբթի օրուան նախարարաց
խորհրդին մէջ խորհրդակցութիւն կա-
տարուած միջոցին նախարարներուն մի-
ջեւ կարծիքի անհամաձայնութիւն մը ծա-
ղած ըլլայ:

— Եպարքոսը, օտար դեսպաններու դի-
մուքին նկատմամբ, սա յայտարարութիւնը
ըրաւ. օրագրողի մը.— «Երեսփոխաններուն
այդ դիմումը առաջ եկած է այն պարա-
գային թէ Բ. Դուրն կողմէ Յունաստանի
տրուած ծանուցադրին պարունակութե-
ան հետեւինք: Միւս կողմէ Բ. Դուրն
նախարարին պարունակութիւնը հաղորդեց
գետնայիններուն, որով պիտի հասկնան թէ
տուածնիս վերջնագիր մը չէ եւ թէ միայն
պահանջուած է վերջ մը տալ հելլեն կա-
ռավարութեան կողմէ Կրեմլին գործերուն
եղած միջամտութեան: Արդէն անպէտ
իրապով չափող ընդունած է կապէս վտան-
գաւոր չեղող ընդհանուր կացութիւնը:
Միւս կողմէ ճշմարտութեան անհամա-
պատասխան է այն ըսուածը թէ մենք
փախաղող ըլլանք Յունաստանի հետ
կարգադրելու Կրեմլին խնդիրը: Պէտք է
վստահ ըլլալ որ այդ տեսակ առաջար-
կութիւնն օրն ալ եթէ ըլլայ, պիտի մեր-
ժենք, որով անկարելի է որ այդ կարգի
առաջարկութիւն մը ընենք:»

— Պաշտօնապէս վերջինները Բ. Դուրն
դիմած են՝ Կրեմլին մասին վարչական կա-
նոնադիր մը պատրաստուելու համար:
— Իմպիւրի կը հեռագրեն թէ երէկ
հոս «պրոքտոր» սկսեց է հելլեն հպա-
տակներուն դէմ:

— Աթինէն ատենապետ յուրերու նայե-
լով, Յունաստանի դրօշի տակ հրաւիրեց
է պահեստներուն հինգ կարգեր, բայց կա-
ռավարական շրջանակներու մէջ այդ
լուրը կը հերքուի: Հելլեն թորիփլանա-
կանները քանի մը օրէ ի վեր մարզանք-
ներ կը կատարեն Սեւանի ծովածոցին
առջեւ:

ՃԱՆԿՈՒ ԽԵՒԻՐԸ.— Ափրիկեան
Տրիպոլիս երկուսան թուականով առա-
նուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ,
կ'ընէ Լա Քիւրի, Քրանական զինուոր-
ները տակաւին ծանօթ կ'ը գտնուին: Կաթի
բնակիչները շատ լուրուած են: Թուա-
րիկները անպատրիկ կողմը կ'երթան եւ
ծանօթի մարդը ժողովուրդը կաթի գա-
ւառանքը կը զաղթէ:

ՅԵՐԱՆԱՍՏԱՆ բաղմամբ զօռադիր-
չիքիւր ժամանուր չորեքշաբթի մօտեցաւ Կ.
Պոլիս պիտի գան: Ատոնք մէկ կան դը-
բամբներին, որոնք խոշոր դրամագը-
լուներ կ'ուղեն տրամադրելի ընել գա-
ղաքին շինութեանց համար: Տեղալ վրայ
պիտի ուսումնասիրեն երկրին գործերը:

ՕՍՄ. ՆԱԽԱՏԱՐԱՐ.— Մտադրու-
թիւն կայ վիճաբանութեան մը կարգա-
կերպելու մարտը թողելով մէջ՝ ինչպաս
օսմ. նստաւորներն: Մրցակիցը քիչ օրէն
կառավարութեան պիտի ներկայացուի:

ՆԵՐՔԻՆ գործող նախարարը հրա-
ւիրած է ամէն ազգի լրագիրներու տե-
րերը կամ խմբագրապետները վաղն առ-
տու ժամ չին Բ. Դուրը երթալ, ուր
խորհրդակցութիւն պիտի կատարուի հայ-
երկիրին եւ մամուլին օգտին վերաբերող
խնդիրներու մասին:

ԵՐԵՎԱՆԻՆԻ.— Հանրօգուտ շինու-
թեան ուղեւոր նախարարութիւնը Բ. Դուրն
մատոց օրինագիծ մը՝ Անատոլի մէջ եր-
կիրակներու շինութեան համար: Ամե-
րիկացիները մը ծրագիրը հիմ քունուած է՝
Սիւլվան սկսելով եւ խորհրդէն, Արդը-
նիւն, Տիարպէրիւն ու Պիթիւն անց-
նելով մինչեւ վան երկաթուղի մը չինե-
լու համար: Ուրի ճիւղ մըն ալ Սիւլվան,
Տիարպէրիւն ու վանի մէջեղէն անցնե-
լով մինչեւ Յուսուպուրը (Ատանա) պիտի
երկարի: Երբոր ճիւղ մըն ալ Տիարպէ-

ՊԵՅԳԸՐ ԿԱԶՄԱԹԱՏՈՒՆ

241 370 500 ԲԵՐԱ 500 370 241

ԱՆԿՈՂՆԻ ԿԱԶՄԱԹՆԵՐ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԱՌԱՐԿԱՆԵՐ



ՄԵԾ ՄԹԵՐԻ ՓԱՅՏԵՆԵՐԿԱԹԷ ԵՒ ԱՆԱԳԱՊԼԻՆՁԷ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՒ,
ՏՂՈՑ, ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԵՒ ՕԹԷԼԻ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՒ

ԲԱՑՈՒՄ ԱՅՐԵՐՈՒ, ՄԱՆՉԵՐՈՒ ԵՒ ՓՈՒՔՐ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ
ՊԱՏԻՄԱՍ ԶԳԵՍՏԵՂԷՆՆԵՐՈՒ ՃԻՒՂԻՆ



ՄԵԾ ԺԱՄԱՆՈՒՄ ՆՈՐ ԶԳԵՍՏԵՂԷՆՆԵՐՈՒ

ԱՅՐԵՐՈՒ, ՄԱՆՉԵՐՈՒ ԵՒ ՓՈՒՔՐ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ
ՎԱՅԵԼՈՒՉ ՁԵՆԵՐՈՎ ԵՒ ՎԵՐՋԻՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆ